



Զուտեխնիკայի եւ մեխანიკացիայի սպասարկման կենտրონ

Ախալքալաքի մունիցիպալիտետի Ղադուլար գյուղի բնակիչ Արմեն Հարությունյանը կրթությամբ քաղաքագետ է, իսկ որպես երկրորդ մասնագիտությունը ընտրել է անասնաբուծությունը: Արմենը երկար ժամանակ է ինչ ցանկանում էր, Սամցխե-Ջավախեթիում անասնաբուծության տեսանկյունով նորարարական տեխնոլոգիաներ ներդնել եւ զարգացնել:

Երիտասարդ անասնաբույժը դիմեց Ախալքալաքի տեղական զարգացման խմբին LAG-ին, գրեց նախագիծ եւ ENPARD2-ի շրջանակներում ձեռք բերեց ֆինանսավորում: Դրամաշնորհի տեսքով ստացած գումարով եւ սեփական խնայողություններով կարողացավ բացել շարժական անասնաբուժական սպասարկման կենտրոն: Կենտրոնը հիմնականում արհեստական բեղմնավորման վրա է կենտրոնացված:



«Նախագծի շրջանակներում ձեռք բերեցինք ուլտրաձայնային զննման ապարատ, արհեստական բեղմնավորման համար անհրաժեշտ գործիքներ, բիոնյութը պահելու շարժական սառնարան, ավտոմեքենա: Այս պահի դրությամբ 10 ֆերմերների ենք սպասարկում: Նման տիպի կենտրոնի բացում պլանավորել ենք Ախալքալաքիում, ինչը կընդլայնի մեր ծառայություն արեալը:

Նրա խոսքերով, դժվար է գտնել երիտասարդ անասնաբույժ, շրջանի բոլոր անասնաբույժները արդեն տարեց են: Իր գործունեությամբ նա պլանավորում է ժողովրդականացնել այս ոլորտը: Արմենը ցանկանում է երիտասարդ սերնդին ցույց տալ, թե որքան կարելու է մասնագիտությունն է անասնաբուծությունը, հատկապես այնպիսի շրջանում, ինչպիսին Սամցխե-Ջավախեթին է, որտեղ անասնապահությունը ընտանիքների համար եկամուտի հիմնական աղբյուրներից մեկն է:



